ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ:
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ՝
ՊՐՈՖԵՍՈՐ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
8 սեպտեմբերի 2023 թ.

ԿԱՐԾԻՔ

Գևորգ Գեղամի Հակոբյանի «Ճշմարիտի հակոտնյա մտակառույցները իրավաքաղաքական խոսույթում» թեմայով ատենախոսության մասին Թ.00.01՝ «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի 2023 թ. օգոստոսի 29-ին 2023-2024 ուսումնական տարվա թիվ 1 նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչ, փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հասմիկ Հովհաննիսյանը, փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսորներ Ռոբերտ Ջիջյանը և Քաջիկ Օհանյանը, փիլ. գիտ. թեկնածու, դոցենտներ Անդրանիկ Ստեփանյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Դավիթ Մոսինյանը, փիլ. գիտ. թեկնածու, ասիստենտ Մարինե Շահբազյանը և դասախոս Նելլի Պետրոսյանը:

Նիստի Օրակարգում ի թիվս այլ հարցերի դրված էր Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդին հրապարակային պաշտպանության ներկայացված Գևորգ Գեղամի Հակոբյանի «Ճշմարիտի հակոտնյա մտակառույցները իրավաքաղաքական խոսույթում» թեմայով ատենախոսության մասին Թ.00.01՝ «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության քննարկումը:

Ելույթ ունեցան ատենախոսության գրախոսներ Անդրանիկ Ստեփանյանը և Հովհաննես Հովհաննիսյանը, ովքեր հրապարակեցին իրենց գրավոր կարծիքները:

Արտահայտվեցին պրոֆեսոր Ռ. Ջիջյանը և դոցենտ Դ. Մոսինյանը:

Քննարկման արդյունքներն ամփոփեց ամբիոնի վարիչ Հ. Հովհաննիսյանը:

Քննարկելով Գևորգ Գեղամի Հակոբյանի «Ճշմարիտի հակոտնյա մտակառույցները իրավաքաղաքական խոսույթում» թեմայով ատենախոսությունը՝ նիստի մասնակիցները (թվով՝ 7) միաձայն ընդունեցին հետևյալ որոշումը.

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գևորգ Հակոբյանի ատենախոսությունը վերաբերում է ժամանակակից իրավաքաղաքական խոսույթներին և, մասնավորապես, դրանց մեջ ճշմարտության խնդրին: Թեման արդիական է, հրատապ, մասնավորապես՝ հայաստանյան իրականության պարագայում, երբ առկա իրավաքաղաքական խնդիրներին ու մարտահրավերներին դիմակայելու համար հնարավորինս համակողմանի վերլուծություններ են պահանջվում, ինչին էլ ըստ էության միտված է ատենախոսությունը: Հեղինակին հաջողվել է հիմնավորել թեմայի արդիականությունը, ցույց տալ ներկայումս դրան անդրադառնալու անհրաժեշտությունը:

Ատենախոսն իրականացրել է զգալի աշխատանք, ձևակերպել է ատենախոսական աշխատանքի նպատակն ու խնդիրները, վերլուծել է մեծ թվով դասական և ժամանակակից գրականություն:

Ատենախոսության ձեռքբերումներից է նաև այն, որ իրականացված է միջգիտակարգային վերլուծություն. խնդիր է դրվել վերհանել *ճշմարիտ* հասկացությունը մտածելու հնարավորությունները իմացաբանության, տրամաբանության և հասարակագիտության դիտանկյուններից:

Ատենախոսությունն աչքի է ընկնում աղբյուրագիտական հարուստ հենքով և խնդրո առարկային նվիրված արդի հետազոտություններում արտացոլված տեսական գաղափարների քննարկմամբ:

Ատենախոսությունը կարող է հետաքրքիր և գործնականորեն օգտակար լինել փիլիսոփայության, քաղաքագիտության և միջազգային իրավունքի բնագավառներում մասնագիտացողների համար:

Արժևորելով ատենախոսի կատարած աշխատանքը և ընդգծելով, որ այն լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից սահմանված ատենախոսական աշխատանքի բովանդակային և ձևական-տեխնիկական պահանջներին՝ այնուամենայնիվ հարկ է նշել, որ աշխատանքը զերծ չէ նաև որոշ թերություններից ու վրիպակներից, որոնց շտկումը էապես կնպաստեր աշխատանքի որակի բարձրացմանը:

1. Նախ՝ աշխատանքը կշահեր, եթե որոշ առանցքային հասկացություններ ուղղակիորեն սահմանվեին ու որոշարկվեին, ինչպիսիք են *իրավաքաղաքական խոսույթը, ճշմարիտի հակոտնյան, իրավական խոսույթի ճշմարիտի հակոտնյա մտակառույցը, ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյան* և այլն, մանավանդ որ երբեմն կարծես թե իբրև համարժեք են կիրառվում հակադեմ և հակոտյնա հասկացությունները, ինչպես օրինակ՝ 11-րդ էջում:
2. Ատենախոսության ներածության մեջ ներկայացված մեթոդները բավականին ընդհանուր են խնդրո առարկայի հետազոտման համար: Մասնավորապես՝ ատենախոսության կենտրոնական դրույթներից է, այն, որ «ճշմարտությունը նկարագրելի չէ», միևնույն ժամանակ, մեթոդների շարքում առաջինը նշված է նկարագրությունը, որին հետևում են համեմատությունը, համանմանությունը և այլն: Եթե նույնիսկ մեթոդի անվանման դժվարություն կար, շահեկան կլիներ, եթե ցույց տրվեր, թե ինչ ճանապարհներով են վերհանվելու ճշմարտության հետ կապված խնդիրները, ինչ մեթոդների բացակայության պատճառով է, որ մինչև այժմ այդ խնդիրները չեն նկատվել և այլն: Եթե է՛լ ավելի մասնավորեցնենք՝ հարկ էր նկարագրել այն մեթոդաշարը, որի օգնությամբ ուրվագծվում և կազմաքանդվում է ճշմարտության հիմնախնդիրը, հակառակ դեպքում այնքան էլ հասկանալի չէ, թե կոնկրետ ի՛նչ հիմնախնդրի մասին է

խոսքը, քանի որ ատենախոսության մեջ քանիցս կրկնվում է այն միտքը, որ ճշմարտությունը սահմանելի ու նկարագրելի չէ, թեև զուգահեռաբար գործածվում է նաև «ճշմարտության էություն» արտահայտությունը: Մնում է անհասկանալի, թե ինչ հիմքով է վերջին արտահայտությունը կիրառվում, եթե ճշմարտությունը նկարագրելի չէ:

3. Ատենախոսության մեջ հեղինակը համոզմունք է հայտնում, որ «Հարցի լիարժեք պատասխանը պահանջում է, որ քննարկումն իրականացվի երկու փոխկապակցված ենթագիտակարգերի՝ ավանդական-ձևական տրամաբանության և իմացաբանության համատեքստերում» (էջ 26): Սակայն մյուս կողմից՝ ատենախոսության ամբողջ տրամաբանությունը կարծես թե կառուցված է այդ բնագավառներում ճշմարտության մասին ընդունված պատկերացումները կազմալուծելու վրա: Ուստի այստեղ է, որ դրանցից տարբերվող մեթոդների ներկայացման կարիք է զգացվում:
4. Այդուհանդերձ, կարծես փոքր-ինչ խափնաշփոթ կա նաև բուն վերլուծության մեջ: Աշխատանքի առաջին գլուխը հեղինակը սկսում է հիմնավորում պահանջող «Գիտության բոլոր բնագավառներում էլ իմացության թիրախը ճշմարտությունն է» (էջ 17) արտահայտությամբ, այնուհետև ըստ էության պնդում է, որ այդ մոտեցումը խնդրահարույց է: Ստացվում է, որ կանխավ ներկայացվում է կամայական պատկերացում, այնուհետև դա քննադատելու հիման վրա ներկայացվում է սեփական դիրքորոշումը: Բայց այդ շարադրանքին կարելի է հակադարձել, որ գիտության թիրախը ոչ թե ճշմարտությունն է, այլ իրականությունը կամ իրականության որևէ հատույթ, իսկ ճշմարտությունը ստեղծված գիտելիքները կարգավորելու համար նախատեսված հասկացություն-եզրույթ է: Առավել ևս որ եղել են տեսաբաններ, որոնք ձգտել են խուսափել *ճշմարտություն* հասկացությունից, ինչպիսին է օրինակ՝ Փոփերը, որը հիշատակվում է ատենախոսության մեջ:
5. Նույն կերպ՝ ատենախոսության մեջ առանց որևէ հեղինակի հղում անելու նշվում է, որ ««ճշմարտություն» և «ճշմարիտ» բառերը սովորաբար գործածվում են միևնույն իմաստով» (էջ 18), այնուհետև որպես հակափաստարկ ի ցույց է տրվում այն ակնհայտ իրողությունը, որ դրանցից առաջինը գոյական է,

իսկ երկրորդը՝ հատկություն արտահայտող ածական: Ստացվում է կանխադրվում է հիմք չունեցող ինչ-որ պատկերացում և քննադատվում է դա:

6. Ի դեպ, աշխատանքի մեկ այլ դրվագում ներկայացվում է Մաքիավելու ուսմունքը, բայց որևէ բնագիր աղբյուր չի հիշատակվում (էջ 87):
7. Ուշագրավ է ատենախոսության մեջ զարգացված կենտրոնական դրույթներից մեկը, այն է՝ *ճշմարտությունը* անորոշ հասկացություն է, ուստի ճշմարիտ որակված բոլոր մտակառույցներն անորոշ են (էջ 31): Այս դրույթն առավել հասկանալի կլիներ հետարդիական ոճով արված շարադրանքում, բայց արդիականության հավակնություններ ունեցող տեքստում մի շարք հարցեր է հարուցում՝ սկսած այն բանից, թե դա փոխադրելի չէ՞ արդյոք հենց բուն տեքստի վրա: Այլ կերպ ասած՝ ատենախոսի այդ դրույթը կամ դրույթները ճշմարի՞տ են: Ստացվում է՝ եթե ճշմարիտ են, ուրեմն անորոշ են, իսկ եթե ճշմարիտ չեն, այնքան էլ ուշադրության արժանի չեն: Բացի դրանից, ատենախոսության մեջ հանդիպում են արտահայտություններ, որոնք թեև զերծ են «ճշմարիտ» կամ «ճշմարտություն» բառերից, բայց ենթադրում են ճշմարտության գոյությունը, օրինակ՝ «Կանտի արդարացի պնդմամբ...» (էջ 20), «Արիստոտելը բազմաթիվ հակափաստարկների միջոցով հստակ ցույց է տվել, որ այդ տեսությունն անընդունելի է» (էջ 22), «սխալ ու կեղծ հայեցակարգ է նաև կրոնական հանդուրժողականության սկզբունքը» (էջ 129) և այլն: Իսկ մեկ այլ տեղում ուղղակիորեն գրված է՝ «Այն հանգամանքը, որ հնարավոր չէ փիլիսոփայությունը (չի կարելի կամ պետք չէ) սահմանափակել միայն իմաստների պարզաբանման գործառույթով, դասագրքային ճշմարտություն է» (էջ 38): Նշված մոտեցման պարագայում պիտի նշանակեր, որ ինչ-որ հանգամանք «դասագրքային անորոշություն է»: Ընդ որում, խոսքը չի վերաբերում միայն ճշմարտությանը. ատենախոսության մեջ իբրև պարզ տրվածություն ընդունվում է գիտությունը և փիլիսոփայությունը սահմանազատող գիծը (էջ 126): Տպավորություն է ստեղծվում, թե միայն հեղինակին է հայտնի ճշմարտության, գիտության, փիլիսոփայության և այլնի ինչ լինելը:
8. Իմացաբանությունից իրավաքաղաքական խոսույթին անցնելիս ատենախոսը ճշմարտության իր ըմբռնումը տեղափոխում է նաև արդարության դաշտ՝

առնվազն երկու անգամ պնդելով այն միտքը, որ արդարության առկայությունն իրավաքաղաքական խոսույթում անհրաժեշտ ու պիտոյական է, իսկ արդարության գոյության ու իրագործման համար անհրաժեշտ պայման է անորոշ ճշմարտությունը՝ փաստորեն իր հետևանքներով (էջ 12, 105): Սակայն կարելի է հիշատակել, օրինակ, Նիցշեի ուսմունքը, որտեղ ճշմարտությունն ու արդարությունը իրարից էականորեն տարբեր իրողություններ են: Բացի այդ, ճշմարտությունը միակը չէ, որ իր բարդության պատճառով տարբեր հարացույցերի ձևավորման պատճառ է դարձել: Նույնը կարելի է ասել նաև *գեղեցիկ, բարիք, արդարություն* և այլ հասկացությունների մասին:

9. Չափազանց նուրբ երևույթների նվիրված բավականին բարդ ու բազմաբովանդակ ատենախոսությունը պիտի ենթադրեր արդյունքների հնարավորինս մանրամասն ներկայացում: Սակայն ատենախոսության «Եզրակացություններ» բաժինն ընդամենը մեկուկես էջ է, ինչը ակնհայտորեն հնարավորություն չէր տա արտահայտելու հետազոտության ձեռքբերումները: Ատենախոսությունը էականորեն կշահեր, եթե եզրակացություններն ավելի ընդգրկուն լինեին:
10. Աշխատանքում կան նաև սրբագրական բացթողումներ, որոնցից ամենաակնբախը թերևս այն է, որ սեղմագրում պաշտոնական ընդդիմախոսի գիտական աստիճանը թերի է գրված:
11. Վերջապես՝ հայերենի տեսանկյունից բարձր մակարդակի գրագետ գրված ատենախոսության մեջ թարգմանված չեն որոշ բառեր կամ եզրույթներ, որոնք վաղուց ընդունված են գիտական հանրության մեջ, օրինակ՝ «դեմոկրատիա» (բուն շարադրանքում երբեմն հանդիպում է «ժողովրդավարություն» տարբերակը), «ակտ» (գործողություն), «լեգիտիմ» (վավերական), «միֆ» (առասպել) և այլն:

Անտարակույս, նշված դիտողություններն ու ցանկությունները ավելի կատարյալ գիտական աշխատանք ունենալու նպատակ են հետապնդում և չեն նսեմացնում կամ ստվերում ո՛չ ատենախոսի կատարած բարեխիղճ աշխատանքը, ո՛չ էլ, առավել ևս, ատենախոսության գիտափիլիսոփայական բարձր արժեքը:

Գևորգ Գեղամի Հակոբյանի «Ճշմարիտի հակոտնյա մտակառույցները իրավաքաղաքական խոսույթում» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից ներկայացվող բոլոր պահանջներին և պատրաստ է հրապարակային պաշտպանության: Հեղինակն էլ լիովին արժանի է իր իսկ հայցած փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ Թ.00.01՝ «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ:

Կարծիքը հաստատված է ամբիոնի 2023 թ. օգոստոսի 29-ի նիստում (արձանագրություն թիվ 1):

Հասմիկ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի ակադեմիկոս
Գեորգ Բրուտյանի անվան փիլիսոփայության և
տրամաբանության ամբիոնի վարիչ

Փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հասմիկ Հովհաննիսյանի
ստորագրությունը հաստատում եմ:

ՀՊՄՀ գիտ. քարտուղար՝ Մարիամ ԻՍՊԻՐՅԱՆ

8.09.2023 թ.